ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ

N Կ/Բ -

,,02,, 02 2026թ.

ՀՀ Շիրակի մարզ,ք.Գյումրի , Վարդանանց հր
Հեռ (+374 312) 3-00-35, 3-29-32, 5-48-12
Հեռապատճեն (+374 312) 3-26-06
Կայքը.www.Gyumricity.am
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ՊԱՐՈՆ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

2025 թվականի նոյեմբերի 1-ից մեկնարկել են Գյումրի քաղաքի Պռոշյան- Գ.Նժդեհ փողոցների խաչմերուկում Կարո Սասունու արձանի տեղադրման աշխատանքները: Աշխատանքների իրականացման ընթացքում տեղի է ունեցել շինարարական աշխատանքների ծավալների համադրում: Բարերարի կողմից հատկացված գումարը բավարար չի եղել շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու համար:

Նախագծով նախատեսված է եղել եզրաքարերի կառուցում՝ 250 գծմ, սակայն փաստացի չափագրության արդյունքում պարզվել է, որ աշխատանքների ծավալը դարձել է 310 գծմ՝ տարածքը պատշաճ տեսքի բերելու համար: Հավելյալ 60 գծմ բազալտե եզրաքարի արժեքը վճարելու, նոր մալուխներ անցկացնելու, նոր լուսատուներ տեղադրելու, բազալտե անվանաքար տեղադրելու և բարեկարգման աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ է հավելյալ գումար:

Կարո Սասունու արձանի շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով՝ խնդրում ենք հատկացնել 980.000 (ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից հետո 2026 թվականի մայիսի 28-ին հուշարձանը լիովին պատրաստ կլինի բացմանը:

Կից ներկայացնում ենք կատարվող աշխատանքների նախահաշիվը:

ԲԱԺՆԻ ՊԵՏԻ Ժ/Պ՝ Կ.ՄԽԻԹԱՐՅԱՆ